

տաքսած էր Զաքարիան, երբ կը տեսնայ  
անոր պատրիարքական աթոռը գրաւելը  
և օտար պաշտպանութիւն ապահովելու  
համար իրեն գիմած ըլլալը, չի վարանիր  
սա տողերը գրելու:

«Յիրաւի մեր հայրագութ սիրոյ աղիք  
յոյժ խանդավառեցան ու գերան այն բաներէն  
որ մեզի գրեցիր, եւ որոնք քեզի պատահեցան  
հազիւ քե հասած էիր ի Կ. Պոլիս: Սակայն  
Աստուծոյ՝ Հօրն ողորմութեանց, գոհութիւն կը  
մատուցանենք, որ զեզ անբարշտաց ձեռքերէն  
սքանչեղապէս ազատեց, չարաւերներու խոր-  
հուրդները ստօքսապարս ըրաւ եւ քոյշ տուաւ որ  
այն որոգայքին մեջ՝ որ քու ոտքերուդ պատրաս-  
տէր էին, իրենք իշխան ու քեզի շնորհեց ընդ  
փորձութեանն եւ գերսն: Իւր անպատեղի գրու-  
թեամբ շնորհէ հիմա որ լաւ սկզբնաւորութենէն  
արդիւնաւորին լաւ արգասիքներ՝ ի փառս իւր  
Ամենասուրբ անուան եւ ի պատիւ Ս. Կարո-  
ղիկէ Եկեղեցւոյ: Եւ յիրաւի մեծ յոյս կը տա-  
ծենք սնոր հաւար որ, ինչպէս կը գրես, այն  
որ անիրաւաբար զեզ կը հալածէր եւ Ս. Ա-  
ռաբէլական Աթոռոյ կը հակառակէր, վար-  
առնուեցաւ, ու դուն, եպիսկոպոսաց, քա-  
հանայից ու Ժողովրդեան միասնայն հաւանու-  
թեամբ Ձեր ազգին Եկեղեցւոյն հոյ առաջնորդ  
կարգուեցար: Քանզի աստուածային շնորհաց  
աջակցութեամբ կը յուսանք բազմաբեղուն սր-